ՀՀ Արմավիրի մարզպետի շնորհավորանքի խոսքը եզդիական համայնքին Նոր տարվա՝ Մալաքե Թաուսի առթիվ

19.04.2023

Արմավիրի մարզի եզդիական համայնքի սիրելի՛ ներկայացուցիչներ, սրտանց շնորհավորում եմ ձեզ Նոր տարվա՝ Մալաքե Թաուսի տոնի կապակցությամբ: Մեր երկրի եզդիների համար թող նոր տարին լինի հաջողությունների, երջանկության ու արգասաբերության տարի:

Հայ և եզդի ժողովուրդների բարեկամությունը դարերի պատմություն ունի: Այդ բարեկամությունն ամրապնդվել է ոչ միայն խաղաղ կյանքով և ամենօրյա աշխատանքով, այլև համատեղ պայքարով, հավատարմությամբ և նվիրումով:

Այսօր էլ մենք պատրաստ ենք եղբայրաբար կիսել ձեր հոգսերը: Ձեր համայնքի խնդիրները մշտապես մեր ուշադրության կենտրոնում են, և մենք շարունակելու ենք աջակցել Հայաստանի՝ հատկապես Արմավիրի եզդիական համայնքին, որ մեր եզդի հայրենակիցները պահպանեն ու զարգացնեն իրենց ազգային լեզուն ու մշակութային ավանդույթները:

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ ձեզ Մալաքե Թաուսի տոնի կապակցությամբ և մաղթում, որ նոր տարին լինի խաղաղ ու արգասաբեր տարի բարեկամ երկու ժողովուրդներիս համար: